

ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՎ

Վ. Մ. ՎԱՐԳԱՆՅԱՆ

Երբ երիտասարդ ու մեծեռանդ Պապ թագավորը ժառանգեց օրհասի մատնելված Հայաստանի գահը, երկրի վերականգնման ուղղությամբ նրա ներդրած ջանքերին ըստ ամենայնի գորավիգում էր Ներսես Մեծ կաթողիկոսը: Թագավորի և կաթողիկոսի նպատակն էր աղետահար Հայաստանը դուրս հանել ծանր կացությունից, միասնական ու հաստատուն հունի մեջ դնել ժողովրդի իրավակեցությունը: Տակավին Արտագերսի հերոսական պաշտպանության օրերին Ներսես Մեծը Պապ արքայազնին ուղարկեց Հռոմեական կայսրություն, ապա Փառանձեմ թագուհու գերեւորմից հետո հռոմեական օգնական զորքով Պապին բերեց Վաղարշապատ: Կաթողիկոսի օգնությամբ Պապը կարողացավ կյանքի կոչել իր թագավորության ամրապնդմանը, երկրի դրության բարելավմանն ուղղված ջանքերը՝ ստեղծելով ներքաղաքական և հասարակական կեցության կայուն իրավիճակ: Ներսեսի շնորհիվ նախարարները համախմբվեցին Պապի շուրջը, և հնարավոր դարձավ երկրի միասնության վերականգնումը, ձեռք բերվեց ձիրավյան փայլուն հաղթանակը 371 թվականին: Հայաստանում վերահասանաժ քրիստոնեությունը, իբրև պետական-քաղաքական գաղափարաբանություն, էապես նպաստեց երկրի հոգևոր, բարոյական և քաղաքական դրության բարելավմանը: Ներսես Մեծը և Մուշեղ սպարապետը, ինչպես հավաստում է Փավստոս Բուզանդը, Պապի թագավորության գորավոր հենասյուններն էին, որոնք «զեկեղեցիսն նորոգեցին և թագաւորութիւնն»²:

Երկրի ներքին կացության բարելավման համար անհրաժեշտ էր հոգևորապես լիցքավորել ժողովրդին, վերականգնել քրիստոնեության բարոյական հիմքերը: Երկրում ծավալված հասարակական-տնտեսական բարեփոխումների կենսաբեր ալիքը չէր կարող շոշափել նաև եկեղեցին, քանի որ այդ բարենորոգումները հարակցվում էին նաև հավատի ոլորտին առնչվող խնդիրներին: Փավստոս Բուզանդի վկայությամբ, Ներսեսը Պապի օրոք ծավալեց լուսավորական բուռն գործունեություն, օրինակարգեց թագավորության ներքին կյանքը՝ գործադրելով իր դատաստանական իրավագործության լծակները: Պատմագրի արտահայտությամբ Ներսեսը «յօրէնսն սաստէր մեծապէս»³:

Պապի թագավորության սկզբնաշրջանում անհրաժեշտ դարձավ առաջին հերթին վերականգնել երկրի պետա-իրավական համակարգը: Պատերազմների հետևանքով բազում աղետների մատնված Հայաստանը կորցրել էր նաև պետականության էական հատկանիշները: Պապի և նրան սատարող Ներսես կաթողիկոսի ձեռնարկած միջոցառումները արգասավոր էին երկրի ներքա-

¹ Տե՛ս Մովսիս Խորենացուց Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, III, ԻԹ, էջ 292—293, ԼԶ, էջ 302:

² Փաստոսի Բուզանդացուց Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1893, Ա, էջ 157:

³ Նույն տեղում, V, Ա, էջ 158, ԻԱ, էջ 180:

ղաքական կացութեան բարելավման, պետա-իրավական համակարգի ամրապնդման, երկրի փլուզված տնտեսութեան վերականգնման համար: Այդ խնդիրները ծառայած էին թե պետութեան և թե եկեղեցու առջև: Ուստի պետութեան ու եկեղեցու շահերը այս բախտորոշ ժամանակամիջոցում ըստ ամենայնի համընկնում էին: Կաթողիկոսի և թագավորի համադաշն գործունեությունը էապես թուլացնում էր վերջինիս ու նախարարների միջև հնարավոր պայքարի ներքին զսպանակները: Պապը և նախարարները, բնականաբար, հետամուտ էին իրենց քաղաքական շահերին: Դրանք միասնական հունի մեջ դնելու գործին իր նպաստը բերեց Հայոց եկեղեցին: Մովսես Խորենացին հաղորդում է, որ Ներսես Մեծը ջանում էր ապահովել Պապ թագավորի և հայ նախարարների համերաշխությունը: Ելնելով քրիստոնեության բարոյական հիմունքներից՝ նա կամենում էր, որ թագավորը և նախարարները առաջին հերթին ղեկավարող ուղենիշ ունենան ավետարանական պատվիրանը, այն է՝ թագավորը լինի արդարադատ ու բարեմիտ իր ստորադրյալների հանդեպ, իսկ վերջիններս հավատարմորեն ծառայեն նրան, ընթանան «յամենայն ճանապարհս արդարութեան»⁴:

Ստեղծված պայմաններում քաղաքական փոթորիկներից ձերբազերծված Հայոց աշխարհը քայլ առ քայլ բուժում էր իր վերքերը՝ վերականգնելով նախկին փառքը և դիրքերն Արևելքում⁵:

Պապի թագավորութեան սկզբնաշրջանում ողջ սրությունները երկրի առջև ծառայած գանձահասութեան խնդիրները հրամայաբար պահանջում էին զրտնել արքունի գանձարանը համալրող նոր և արդյունավետ միջոցներ: Պապ թագավորի եկեղեցական բարեփոխումների առավել ազդու դրդապատճառներից մեկը դա էր: Անշուշտ հայոց արքունիքում առկա էր նաև եկեղեցու ավելի ու ավելի մեծացող ազդեցությունը կարելույն շափ սահմանափակելու միտումը: Հարկ է նշել, որ Ներսես Մեծի հիմնած բարեգործական հաստատությունները պահվում էին ոչ միայն եկեղեցական կալվածքներից ստացվող եկամուտներով, այլև պետական հասույթներով, ինչը, հարկավ, Պապի թագավորութեան սկզբնափուլում ծանր բեռ էր դարձել ժողովրդի վտիտ ուսերին: Պետական գանձարանը Շապուհ II-ի աղետահարույց ձեռնարկումների հետևանքով լիովին դատարկվել էր, ուստի բավարար միջոցներ չէր կարող ընձեռել կազմալուծված պետութեան, բանակի կարիքները հոգալու համար:

Եկեղեցու հասույթների, նրա պետական լայն իրավազորութեան սահմանափակմանը հետամուտ էին հատկապես պարսկամետ հայ նախարարները՝ հայր մարդպետի գլխավորությամբ, որոնք, օգտվելով Պապ թագավորի պարսկամետ դիրքորոշումից, դիմեցին առավել գործունե միջոցների՝ Հայ եկեղեցու նյութական հնարավորությունները և պետա-իրավական ընդլայնվող գործառնությունների շրջանակները ըստ ամենայնի նեղացնելու համար: Այդ նպատակով նրանք առաջին հերթին անհրաժեշտ համարեցին ի դերև հանել պետա-իրավական ոլորտներում և անձամբ Պապ թագավորի վրա Ներսես Մեծի ազդեցությունը: Կանխորոշ այս ծրագրի իրագործման ոգին մարդպետն էր, որին սակայն չհաջողվեց Ներսեսի կենդանության ժամանակ իրագործել իր մտահղացումները: Կաթողիկոսի հակառակորդները շարունակեցին դավադիր ձեռնարկումներն ընդդեմ եկեղեցու և նրա առաջնորդի և, անշուշտ, առանց Պապի գիտություն, որոշեցին ասպարեզից վերացնել Ներսեսին:

⁴ Մովսես Խորենացի, III, ԼԸ, էջ 305: Ներսես Մեծի հորդորներն ունեցան իրենց գրական ազդեցությունը: Պապը Կամարականներին և ուրիշ նախարարների վերադարձից տակավին Արշակ II-ի օրոք նրանցից խլված հողատիրությունը (էջ 305—306):

⁵ S⁶ R. Grousset. Histoire de l'Arménie, Paris, 1947, p. 148.

Հակասական է Փավստոս Բուզանդի մի հաղորդումը, ըստ որի Պապ թագավորն իբր թե «յամենայն ժամ էր թշնամի մեծի քահանայապետին, վասն յանդիմանութեան մեղաց իւրոց շարեաց՝ զոր գործերն»⁶: Անշուշտ իրական չէ նաև Մովսես Խորենացու հաղորդումն այն մասին, որ Ներսեսը հանդիմանում էր Պապ թագավորին՝ նրա ախտավոր վարքի համար⁷: Վստահություն չի ներշնչում նաև Փավստոս Բուզանդի մեկ այլ վկայությունը, ըստ որի Ներսեսը կանխավ իրազեկ էր դարձել Պապի կողմից իրեն իբր թե թունախառն գինի մատուցելու մասին, բայց չէր հրաժարվել այն ըմպելուց⁸: Սակայն, հիմն իրոք Ներսեսը տեղյակ էր այդ մասին, ինչու՞ պետք է կամովին գնար մահվանն ընդառաջ և դիմեր ինքնասպան քայլի և, դեմ գնալով քրիստոնեության բարոյական նորմերին, վերջ տար իր բեղմնավոր կյանքին, որը միայն իրեն չէր պատկանում: Նրա այդ քայլը հակասում էր իր իսկ սերմանած գաղափարներին ու գործունեությունը: Որ Ներսեսը համոզված չէր իր դեմ Պապի նյութած դավի հնարավոր լինելու մեջ, երևում է Փավստոս Բուզանդի կողմից Ներսես Մեծի շուրթերին դրված խոսքերից, որոնք նա արտասանեց «Թունալից» գինին ըմպելուց առաջ: Այդ խոսքերից երևում է, որ Ներսեսը բնավ չի կասկածել, որ Պապը կարող է հակված լինել իրեն թունավորելու մտքին⁹: Հնարավոր է, որ պարսկամետ ուժերի կողմից իր դեմ նյութած դավերից ազդված՝ Ներսեսը կաթվածահար է եղել Պապի հրավիրած ճաշկերույթի ժամանակ, որը կայացել է Եկեղյաց գավառի Խախ ավանում, Պապի ապարանքում¹⁰: Հանկարծահաս մահը պատճառ դարձավ, որպեսզի հյուսվի Ներսեսի թունավորման մասին առասպելը, որն ամենայն հավանականությամբ ստեղծվեց նրա մահվանից հետո, երբ Պապը կրճատեց եկեղեցու կալվածները և փակեց Ներսեսի հիմնած բարեգործական հաստատությունները:

Ներսես Մեծի անդուլ ջանքերով Հայոց եկեղեցին վերածվեց հզոր ու ամբարկուտ կազմակերպության, որը պետա-իրավական և տնտեսական ոլորտներում դարձավ թագավորական իշխանության լուրջ մրցակիցը: Երկրի գանձահաստության կարիքները պահանջում էին հօգուտ պետական գանձարանի կրճատել եկեղեցու հաստիքներ միջոցները, սահմանափակել նրա հողատիրական իրավունքները: Տնտեսապես թուլացած եկեղեցին հարկ է որ ստորադասվեր պետական իշխանությանը և համակերպվեր երկրում իրագործվող տնտեսական, պետա-իրավական բարեփոխություններին, եկեղեցու այն կացությունը, որը կանխորոշված էր հայոց թագավորի բարենորոգչական ձեռնարկումներով: Պապի մտահղացումները կենսագործելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր, որ եկեղեցու գլուխ կանգներ թագավորին սատարող հոգևորական: Լուսավորչի տոհմից կաթողիկոսական թափուր գահի արժանավոր թեկնածու էր Ներսես Մեծի 25-ամյա որդին՝ Սահակը, սակայն նա ուսանում էր Կոստանդնուպոլսում: Պապը գերադասեց կաթողիկոս նշանակել

⁶ Տե՛ս Փավստոս Բուզանդ, V, ԻԴ, էջ 182:

⁷ Տե՛ս Մովսես Խորենացի, III, ԼԸ, էջ 306:

⁸ Տե՛ս Փավստոս Բուզանդ, V, ԻԴ, էջ 182—183:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 183:

¹⁰ Հմմտ. Ա. Գաբազաշեան, Քննական պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1895, էջ 145: Ստ. Մալխասյանի կարծիքով Ներսեսի արագահաս մահը տեղի ունեցավ ինչույ՞քի պահին գինու ազդեցությամբ նրա թորախտի արագ բռնկման պատճառով (տե՛ս Մ. Խորենացի, «Հայոց պատմություն» (Երևան, 1940, ծան. 299): Հ. Մանանդյանը բոլորովին հիմնադուրկ է համարում Ներսեսի թունավորման մասին կարծիքը (տե՛ս Հ. Մանանդյան, Երկեր, Բ, Երևան, 1978, էջ 216): Մինչդեռ Վ. Հացունին և Ն. Ակիսյանը դա ընդունում են իբրև իսկություն (տե՛ս Վ. Հացունի, Կարևոր խնդիրներ Հայ եկեղեցու պատմութենէն, Վեներիկ, 1927, էջ 198, Ն. Ակիսյան, Ս. Մաշտոց վարդապետ, կենսըն ու գործունեութիւնը հանդերձ կենսագրութեամբ Ս. Սահակայ, Վիեննա, 1949, էջ 37—38):

Աղբիւնոսի թոռ Հուսիկ եպիսկոպոսին: Անշուշտ այն փաստը, որ Պապն անձամբ Հուսիկին կարգեց Հայոց եկեղեցու գլուխ, վկայում է վերջինիս հանդեպ գերակայութուն ունենալու թագավորի վճռականութեան մասին: Պապն իր այդ քայլով նաև կամենում էր Հայոց եկեղեցին կտրել Կեսարիայի աթոռից և դարձնել ավելի ինքնուրույն, առավել ազգային կազմակերպութուն: Հարկ է նշել, որ հայ հոգևորականութիւնը, հիմնականում ունենալով արեւմտյան կողմնորոշում, կամենում էր հայոց կաթողիկոսական գահին բազմեցնել Լուսավորչի տոհմի ներկայացուցիչին: Այս մտայնութեան կրողն էր նաև հոգևորական դասի ոչ անհայտ ներկայացուցիչ Փավստոս Բուզանդը, որը բացասաբար է արձագանքում Աղբիւնոսյան տոհմից հայոց կաթողիկոս կարգելու իրողութեանը, դրսևորում է անթաքույց թունալից վերաբերմունք Հուսիկի և Պապ թագավորի հանդեպ՝ վերջինիս համարելով ներսես Մեծին սպանող: «Յետ Մահուանն հայրապետին ներսէսի,— գրում է պատմիչը,— կացոյց թագաւորն Պապ զՅուսիկ եպիսկոպոս, որ էր ի զաւակէ Աղբիւնոս եպիսկոպոսին Մանազկերտոյ: Ետ հրաման ունել նմա զտեղի հայրապետացն, իշխել փոխանակ նորա՝ զոր սպանն»¹¹:

Ներսես Մեծին հաջորդած Աղբիւնոսյանի մասին Փավստոսի և Խորենացու հաղորդումները տարամիտվում են: Վերջինս ներսեսի աթոռի ժառանգորդ է հիշում ոչ թե Հուսիկին, այլ Սահակին՝ դարձյալ Աղբիւնոսյան տնից: Պատմահայրն այս Սահակին բնութագրում է դրականորեն և շեշտում է «առանց մեծի արքեպիսկոպոսին Կեսարու» նրան հայրապետ կարգելու փաստը¹²: Հ. Մանանդյանի կարծիքով Հուսիկի իսկական անունը պետք է լիներ Իսահակ, որին նա նույնացնում է Սոկրատի «Եկեղեցական պատմութեան» մեջ հիշատակվող Իսակոկիս եպիսկոպոսի հետ՝ Հուսիկ անունը համարելով Իսահակի աղավաղված ձևը¹³: Մ. Օրմանյանը ներսեսի հաջորդին հիշում է Շահակ անունով, որը համարում է Սահակի ասորական այլաձևութունը¹⁴, որը սակայն չի վկայված սկզբնաղբյուրներում և չի ապացուցվում¹⁵: Թերևս Սահակը ներսեսի հաջորդի աշխարհական անունն է:

Կեսարիայի հայրապետի կողմից չձեռնադրվելու և հայոց թագավորի կողմից կաթողիկոս կարգվելու փաստն ինքնին Հուսիկ հայրապետին ուղղակի կախման մեջ դրեց հայոց թագավորից: Նման դրութիւնը, անշուշտ, սահմանափակում էր Հայոց եկեղեցու առաջնորդի պետա-իրավական, քաղաքական գործառնութիւնը, բայց այն միաժամանակ կաթողիկոսին ավելի էր մերձեցնում արքունիքին՝ նրան դարձնելով հայոց թագավորի կամքի գործադրող հոգևոր-եկեղեցական ուղորտներում: Այս փաստը վկայված է Փավստոս Բուզանդի երկում: Հուսիկը, հավաստում է պատմագիրը, «ըստ կամաց թագաւորին միայն ունէր զպատին, և կայր ի լուսեան և ի հանդարտութեան զամենայն աւուրս կենաց իւրոց»¹⁶:

Պետք է կարծել, որ Հուսիկին Հայոց եկեղեցու գլուխ կարգելը հետևանք էր նաև Պապի պարսկամետ կողմնորոշման, հոռմեական ազդեցութիւնից երկիրը ձերբագրծելու նպատակադրման: Կեսարիայում հայոց կաթողիկոսի ձեռնադրվելու պարագայում սերտանալու էին հայ-հոռմեական եկեղեցական հարաբերութիւնները, ինչը ներհակում էր հայ-պարսկական մերձեցմանը: Իր հերթին Կեսարիայի աթոռը շահագրգռված էր Հայաստանի եկեղեցու հետ

¹¹ Տե՛ս Փավստոս Բուզանդ, V, ԻԹ, էջ 190:

¹² Տե՛ս Մովսես Խորենացի, III, ԼԹ, էջ 190:

¹³ Տե՛ս Հ. Մանանդյան, Երկեր, Բ, էջ 217, ժ. 2:

¹⁴ Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, 4. Պոլիս, 1942, էջ 223—224:

¹⁵ Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, Երևան, 1948, էջ 103, 348:

¹⁶ Տե՛ս Փավստոս Բուզանդ, V, ԻԹ, էջ 190—191:

ունեցած կապերի կայունացմամբ, քանի որ տակավին Հռոմեական կայսրու-
թյունում ուղղափառ քրիստոնեությունը չէր հռչակվել պետական կրոն (նը-
շենք, որ այն կայսրության պաշտոնական հավատը դարձավ միայն Քեոզոս
Մեծի (379—395) օրոք)¹⁷, ուստի քրիստոնեական եկեղեցիների միությունը
հույժ կարեւորվում էր կայսրությունում այդ կրոնի վերջնական հաղթանակի
տեսանկյունից: Այդ պատճառով Կեսարիայի մետրապոլիտությունը ամեն
կերպ ջանում էր հաստատուն հիմքերի վրա դնել Հայ եկեղեցու հետ ունեցած
ծիսական, դավանաբանական սոնչությունները: Բնականաբար Կեսարիայի
եկեղեցին բացասաբար պետք է արձագանքեր Պապի կողմից Հուսիկին կա-
թողիկոս ձեռնադրելու իրողությանը: Փավստոս Բուզանդը վկայում է, որ երբ
Կեսարիայի հայրապետը տեղեկացավ, որ առանց իր կողմից ձեռնադրվելու
Հուսիկը կարգվել է հայոց կաթողիկոս, անհապաղ գումարեց Կեսարիայի նա-
հանգի եպիսկոպոսների ժողով, որի որոշմամբ ցատումնալից մի թուղթ ու-
ղարկվեց հայոց թագավոր Պապին և Հուսիկին՝ վերջինիս զրկելով կաթողի-
կոսի իրավունքներից: Ընդ որում, նույն ժողովի որոշմամբ, ինչպես վկայում
է Փավստոս Բուզանդը, Հուսիկը միայն պետք է ունենար հայոց թագավորի
սեղանի հացը օրհնելու իրավունք և զրկվեր եպիսկոպոսներ ձեռնադրելու ի-
րավազորությունից: Նույն վճռով Հայաստանի հոգևորականները եպիսկոպոսի
կարգ ստանալու համար պետք է մեկնեին Կեսարիա և ձեռնադրվեին այնտեղ:
Պատմագիրը հավաստում է, որ Կեսարիայի եկեղեցաժողովի այդ որոշումը
իրագործվեց, որի հետևանքով Հայաստանի բոլոր գավառներից եպիսկոպոս
ձեռնադրվելու համար պարտադիր մեկնում էին Կեսարիա, քանի որ «յայնմ
հետէ բարձու իշխանութիւն յերկրէն Հայոց, այնուհետև ոչ իշխէին եպիսկո-
պոսք ձեռնադրել...»¹⁸:

Սակայն հիշյալ ժողովը և անձամբ Կեսարիայի Բարսեղ հայրապետն ի
զորու շեղան կարգալույծ անել հայոց կաթողիկոսին, և միայն հայոց Պապ
թագավորի կամքը վճռեց Հուսիկի կաթողիկոս կարգվելու խնդիրը: Կեսարիայի
աթոռը չկարողացավ բեկանել Պապի վճիռը:

Հայաստանի հոգևորականությունը հիմնականում ընդունեց Հուսիկին որ-
պես Հայոց եկեղեցու գլուխ՝ համակերպվելով թագավորի վճռին: Դրան էա-
պես նպաստեց այն հանգամանքը, որ Հուսիկը տակավին ներսես Մեծի կեն-
դանության ժամանակ հայ կղերական դասի մեջ վաստակել էր օրինավոր և
եկեղեցականի համբավ, ուստի դարձել էր ներսեսի տեղապահը և նրա մահ-
վանից հետո նստելով կաթողիկոսի գահին՝ պահպանում էր իր նախորդի եկե-
ղեցական, ծիսական բարեկարգությունները, հոգևոր ավանդները՝ իրեն զրո-
սևորելով որպես «այդ գովելի և լի առաքինութեամբ և բարեկարգութեամբ
կրօնի»¹⁹: Քանի որ Կեսարիայի մետրապոլիտը Հայոց եկեղեցու նկատմամբ
չուներ կանոնական իրավունքներ, ուստի ի զորու շեղավ կարգաթող անել
Հուսիկ կաթողիկոսին: Հայտնի է, որ արիոսականության հետևորդ Վաղես
կայսրը ծիսական վերաբերմունք ուներ քրիստոնեություն մյուս ուղղություն-
ների նկատմամբ: Հայաստանում հռոմեական զորքերի հրամանատար Տերեն-
տին Կեսարիայի Բարսեղ հայրապետի հղած նամակից²⁰ կարելի է հետևեց-
նել, որ կայսեր հրամանով Տերենտը Բարսեղ հայրապետից պահանջել է Հա-
յաստանում կաթողիկոս նշանակել օտար (հույն) եպիսկոպոսի, որին նա հան-

¹⁷ Տե՛ս «История Византии», т. I, М., 1967, էջ 179—180:

¹⁸ Փավստոս Բուզանդ, V, ԻԹ, էջ 190—191:

¹⁹ «Առփերք հայկականք», է, Վենետիկ, 1853, էջ 27:

²⁰ Տե՛ս J. Migre, Patrologiae graecae, t. 32, Turnholti, 1961, p. 498—501:

վանն հիշում է (հավանաբար այդ եպիսկոպոսը հարում էր արիոսական աղանդին):

Այդուհանդերձ Կեսարիայի մետրապոլիտը չկարողացավ կատարել Տերենտի և Վաղես կայսեր կամքը²¹, քանի որ Հայաստանի անկախ եկեղեցու նկատմամբ նա չունի նվիրապետական գերակայություն: Պետք է կարծել, որ դրանում որոշակի ազդեցություն ունեցավ նաև այն հանգամանքը, որ Կեսարիայի աթոռը ընդունում էր Հայոց եկեղեցու առաքելական ծագումը, նրա ինքնագոյ կացությունը: Պապ թագավորի քաղաքական ինքնուրույն ուղեգծի պայմաններում Հայաստանը զերծ մնաց բյուզանդական եկեղեցու ազդեցությունից: Վաղես կայսրը չէր կարող որևէ ձևով ներգործել հայոց եկեղեցու դիրքորոշման վրա: Անշուշտ վճռորոշ նշանակություն ունեցավ հայոց թագավորի արմատական վերաբերմունքը եկեղեցական խնդիրներին: Պապը քաջ գիտակցում էր, որ իր եկեղեցական բարեփոխությունները իրագործելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր, որ դրանք շոշափեին միայն Հայոց եկեղեցու շահերը, դուրս չգային հայոց թագավորի ազդեցության ոլորտից, առիթ չտային արտաքին ուժերի դժգոհության և քաղաքական տեսակետից անպատեհ միջամտությունների: Դրանք կանխելու համար անհրաժեշտ դարձավ առաջին հերթին Հայ եկեղեցին դուրս բերել Կեսարիայի մետրապոլիտոսության ազդեցության ոլորտից, քանի որ վերջինս կարող էր ընդդիմանալ Պապի եկեղեցական բարեփոխություններին՝ դրանք դիտելով որպես երկու աթոռների միջև եղած հարաբերություններին, քրիստոնեական ընդհանուր միությանը ներհակող միջոցառումներ, որոնք կարող էին տեղիք տալ բացասամետ երևույթների Արևելքի քրիստոնեական աշխարհում՝ անշուշտ սահմանափակելով նաև Կեսարիայի մետրապոլիտոսության իրավասության շրջանակները:

Պապ թագավորը համոզված էր նաև, որ հնարավոր չէ Հայոց եկեղեցին լիովին անջրպետել Արևմուտքի քույր եկեղեցիներից և դնել մեկուսացման մեջ, և որ Տերենտին ու Վաղես կայսրին չպետք է հակադրվել այն պարզ պատճառով, որ Հայաստանում տեղակայված բյուզանդական զորքը պատեհ առիթով կարող էր միջամտել Հայաստանի ներքին գործերին: Այդ հանգամանքը նկատի առնելով՝ Պապը դրսևորեց ճկուն մոտեցում՝ օգտագործելով Կեսարիայի մետրապոլիտոսության և Կապադովկիայի մյուս աթոռի միջև եղած հակասություններն ու մրցակցությունը: Ինչպես վկայված է Բարսեղ Կեսարացու մի թղթում (գրված 373 թ.), Պապ թագավորը Հուսիկի փոխարեն կաթողիկոս կարգեց Փավստոս եպիսկոպոսին²² և, ի հակադրո Կեսարիայի մետրապոլիտոսության, նրան ուղարկեց Կապադովկիայի մյուս աթոռի՝ Անթիմոս մետրապոլիտի մոտ: Ընդ որում, վերջինիս և Բարսեղ Կեսարացու հարաբերությունները ծայր աստիճանի սրված էին, ուստի Անթիմոսը սիրով ընդունաչեց Պապին և նրա առաջադրած թեկնածուին՝ Փավստոսին ձեռնադրեց հայոց կաթողիկոս²³: Վերջինիս Փավստոս Բուզանդը համարում է հոռոմ (ըրոտմայեցի)²⁴: Հնարավոր է, որ այս կաթողիկոսը ծագումով Փոքր Հայքից էր և նախկինում առնչակցվել էր Անթիմոսի հետ: Պապն, անշուշտ, կարող էր նկատի առնել նաև այս հանգամանքը:

Հասկանալի է, Անթիմոսի կողմից Փավստոսին ձեռնադրելու փաստը սահ-

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ 499—501:

²² Ըստ Փավստոս Բուզանդի այս եպիսկոպոսը եղել էր ներսես Մեծի գործակիցը (Փավստոս Բուզանդ, VI, Ծ, էջ 224):

²³ Տե՛ս Լ. Գեյցեր, Փաւստոս Բուզանդ կամ Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութիւն, Վեներիկ, 1896, էջ 132:

²⁴ Տե՛ս Փավստոս Բուզանդ, VI, Ծ, էջ 224:

մանափակում էր Կեսարիայի մետրապոլիտոսի շրջանակները: Այն նաև խորացրեց Կեսարիայի աթոռի և հայոց կաթողիկոսության միջև տակավին Հուսիկի օրոք գոյացած անջրպետը: Սակայն Կեսարիայի աթոռը կարողացավ իր ազդեցությունը պահպանել հայ հոգևորականություն մի զգալի մասի վրա, որը շարունակեց Կեսարիայի աթոռի հետ ունեցած հոգևոր-ծիսական առնչությունները և, հավանաբար, վերջինիս հորդորով Փավստոս եպիսկոպոսի փոխարեն հայոց կաթողիկոսի գահի համար առաջադրեց Կյուրեղին, ապա Կեսարիայի Բարսեղ մետրապոլիտից խնդրեց նրան ձեռնադրել հայոց հայրապետ: Բարսեղը սիրահոժար արձագանքեց դրան և հայոց կաթողիկոս ձեռնադրեց Կյուրեղին²⁵:

Պապի կողմից Փավստոսին հայոց կաթողիկոս առաջադրելու փաստն ինքնին վկայություն է հայոց թագավորի կամքով Հուսիկին զահրենկեց անելու հանգամանքի: Թեև Փավստոս Բուզանդը գրում է, որ Հուսիկը կարգալուծ է արվել Կեսարիայի աթոռի կամքով²⁶, սակայն ստեղծված իրավիճակում դա քիչ էր հավանական: Հուսիկին Պապն էր նշանակել հայոց կաթողիկոս, ուստի բնական էր, որ նա էլ կարող էր զահրենկեց անել նրան: Պապը իր եկեղեցական քաղաքականության մեջ առաջնորդվում էր Հայ եկեղեցու անկախության գաղափարով: Վերջինս պետք է սատար կանգնեցրեց Պապի վարած քաղաքականությանը, նրա եկեղեցական բարեփոխումներին և որևէ կերպ չխոչընդոտեց դրանց: Հարկ է նշել, որ հայոց այս եռանդուն թագավորը եկեղեցական իր բարենորոգումները իրագործեց Հուսիկի ու Փավստոսի հովվապետության ժամանակ²⁷:

Պապ թագավորի եկեղեցական քաղաքականությունը հետապնդում էր Հայոց եկեղեցու ինքնուրույնությունն ապահովելու հեռամետ նպատակներ: Այդ քաղաքականության մեջ, անշուշտ, վճռական էին նաև պետական գանձահաստի շահախնդրությունները: Հարկ է նշել, որ տակավին Ներսես Մեծի օրոք ստեղծված բարեգործական հաստատությունների լայն ցանցը կլանում էր մեծ միջոցներ, որոնց կարիքը անհրաժեշտ էր աղետահար երկիրը ֆինանսապես առողջացնելու, տնտեսությանը զարկ տալու, բանակի և պետության կարիքները հոգալու համար: Բացի այդ, նշված հաստատությունները էականորեն նպաստում էին եկեղեցու հեղինակության մեծացմանը: Այս բոլոր հանգամանքները նկատի առնելով՝ Պապը իր բարեփոխությունների սուր ծայրն առաջին հերթին ուղղեց այդ հաստատությունների դեմ: Դրանց մեծ մասի գործունեությունը դադարեցվեց թագավորի հրամանով: Երկրի գրեթե բոլոր հորիզոններն ընդգրկած այդ համարձակ ու նախադեպեր շունեցող միջոցառման շնորհիվ հօգուտ թագավորական գանձարանի խնայվեցին նյութական մեծ միջոցներ: Դա հնարավորություն տվեց թեթևացնելու երկրի վրա ծանրացած հարկային բեռը: Պետք է նշել նաև, որ Ներսեսի հիմնած հաստատությունների վերացումը չէր հարվածում եկեղեցու գանձահաստի շահերին, քանի որ դրանց մեծ մասը (հատկապես աղքատանոցները) վերածվել էին անբանների, պորտաբույծների հանգրվանների, որոնք խժոռում էին նաև եկեղեցու հասույթները: Բնականաբար, հարկային բեռի թեթևացման շնորհիվ երկրի բնակչությունը, հնարավոր է նաև հոգևոր դասի մի մասը, դրականորեն պետք է արձագանքեին Պապի բարենորոգչական ձեռնարկումներին:

Սակայն հայոց թագավորի եկեղեցական բարենորոգումները միայն այդ-

²⁵ Տե՛ս Հ. Գեյգեր, նշվ. աշխ., էջ 132—133:

²⁶ Տե՛ս Փավստոս Բուզանդ, V, ԻԹ, էջ 190:

²⁷ Համաձայն Մովսես Խորենացու մի վկայության, Հուսիկը (Սահակը) զահակալել է շրթաարի (Մովսես Խորենացի, III, ԼԹ, էջ 306), մինչդեռ Փավստոս Բուզանդի հաղորդմանց երվում է, որ Հուսիկի կաթողիկոսությունն ավելի կարճատև է եղել:

քանով շահամանափակվեցին: Պապի հիմնական նպատակը եկեղեցու տնտեսական հզորության հիմքերը խարխլելն էր: Այդ նպատակադրումով բռնագրավվեցին եկեղեցական հողատիրույթները: Պապն արքունիքի օգտին եկեղեցուց խլեց տակավին Տրդատ Մեծի կողմից նրան հատկացված յոթական հողաբաժնից հինգը, կրճատեց նաև եկեղեցուն տրվող հարկերը՝ տասանորդը և պտղիչ²⁸:

Եկեղեցու կալվածքների այսօրինակ կրճատումը տեղիք տվեց հոգևորականության բուռն դժգոհության: Այդ հողի վրա հերյուրվեց Պապի կողմից ներսես Մեծին թունավորելու առասպելը: Սակայն Պապը շանում էր, որքան հնարավոր է, շարել Հայոց եկեղեցու և պետության միջև եղած հարաբերությունները: Նա հաշվի էր առնում նաև այն հանգամանքը, որ իր բարենորոգումներին բացասաբար կարող են արձագանքել նաև քրիստոնեական մյուս եկեղեցիները: Ուստի նա Փավստոս եպիսկոպոսին ձեռնադրելու համար կապողովկիա ուղարկեց: Պապը, ինչպես տեսանք, շարգելեց նաև հայ հոգևորականներին Կեսարիա մեկնել՝ եպիսկոպոս ձեռնադրվելու համար: Ընդ որում, Հայոց եկեղեցին չխզեց ծիսական-դավանաբանական առնչությունները Կեսարիայի մետրապոլիտոսության հետ, նույնիսկ ընդունեց ի գործադրություն Բարսեղ Կեսարացու հեղինակած կանոնները²⁹:

Պապի եկեղեցական բարեփոխումները թեև թուլացրեցին Հայոց եկեղեցու տնտեսական հիմքերը, սակայն նպաստեցին թագավորական իշխանության զորացմանը, երկրի տնտեսական հոգսերի թեթևացմանը: Դրանց շնորհիվ նորոգվեց նաև Հայոց եկեղեցին՝ հրաժարվելով հին և արդեն իր դարն ապրած գործառույթներից: Եկեղեցին լիտուրգիայից երկրի տնտեսության զարգացմանը և դարձավ ավելի ինքնուրույն: Դա, անշուշտ, կարևոր ուղենիշ էր Հայ եկեղեցու դավանական ինքնորոշման ճանապարհին:

В. М. ВАРДАНЯН — Вокруг церковной политики царя Папа.— В статье рассматриваются различные аспекты проблем церковной политики царя Армении Папа (369—374), который в начале своего царствования встал перед альтернативой: или оградить страну от кризисных ситуаций и создать мощную армию посредством ограничения фискальных источников церкви, или же смириться с фактом слабости государственных институтов и с нарастанием мощи и влияния церкви. В начале своего царствования Пап иногда защищал процерковные интересы. После кончины (373 г.) католика Нерсеса, он назначил главой Армянской церкви священнослужителя из бывшего жреческого рода Албиана. Пап сумел нейтрализовать противодействия кесарийского митрополита в отношении своей церковной политики посредством установления отношений с вторым каппадокийским митрополитом.

В результате реформ, проведенных Папом, в пользу государства была конфискована большая часть церковных земель, сократились другие источники богатства церкви. Большинство армянских нахараров придерживалось курса церковной политики Папа. Реформы Папа способствовали финансовому оздоровлению Армении, возрастанию мощи государства. Одновременно, вследствие этих реформ обновлялось духовенство, отказываясь от традиционно сложившихся излишних обрядов и установок, однако сохранило структуру и вероучение Армянской апостольской церкви, увеличивая ее самостоятельность.

²⁸ Տե՛ս Փավստոս Բուզանդ, V, 18, էջ 194.

²⁹ Տե՛ս «Կանոնադիրք Հայոց», աշխ. Վ. Հակոբյանի, հ. Ա, Երևան, 1964, էջ 334 և հտ.: